

ԽԱՐԵԼԱ

ՅԻՐՈՅԵՅԱՆ
ՅՈՑՊՈՐՈՅՅՆ

Գրկն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԱՊՐԻԼԻ 17 -ին. Թիֆլիս. №16

Հ Ա Ր Ս Տ Ի Մ Օ Տ

Օ. Ն. ՇԱՆՈՒՐ



—Իմացանք բերի ես, շատ ցաւեցինք. եկանք և տեսնելու և մի խնդիրքով պատուելութեանդ գիմելու:
 դպրոցը փակուամ է, կարելի է դուք էլ ձեր լուսայով մեզ օգնութեան կըզգաք—մի բան նւիրէք:
 —Ձէ, չէ, սիրելիներ, ես էլ հայ իմ, ես էլ մարդ եմ, քնչու այդպէս շտիտի լինեմ. բայց ոչինչ չեմ
 տալ ձեզ, որովհետեւ դեռ հօշոյն մեռնում:—Մենք հայերս երկու նւագ ենք տալիս՝ երկուսն էլ միանման են—
 մէկը՝ երբ մահւան հրեշտակն է մեզ երեւում և միւսն էլ երբ՝ ատրճանակի փողն է երևում:

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ի Ո Ւ Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն 1911 թ.



Երգիծարանական-աստիրական պատկերազարդ շաբաթաթերթի || | Լոյս է տեսնում ամեն շաբաթ անխափան Պաշտօնական օրգան պետական, աղգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, ախտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին: Անհրաժեշտ թերթ բոլոր ընտարիքների համար: «ԽԱԹԱՖԱԱՆ» շաբաթին ծիծաղեցնում և լացացնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի:

Table with subscription rates: «ԽԱԹԱՖԱԱՆ» ԲՇՈՆԵՒԻՆՆ Է. Տարեկան 5 ռ., Կէս տարին 3, Երեք ամիսը 1 > 50 կ., Ամիսը — 50, Թիֆլիսում տարեկ. 4 > —

Table with subscription rates: «ԽԱԹԱՖԱԱՆ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՅԱՆ-ԴԱՅ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ. Տարեկան 12 ռ., Երեք ամիսը 3 > 50 կ., Կէս տարին 6 > Մէկ ամիսը 1 > 20 >

100 տարով բաժանորդագրւել ցանկացողին 75% զեղջ: Զրի կարդացողներին պէտք է նկարենք զլիւվայր:

Հասցէն՝ Тифлисъ Редакция „ХАТАБАЛА“ Արտասահմանից՝ Tiflis Caucas edastion «Khatabala» Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

«ԽԱԹԱՖԱԱՆ» օՐԱՑՈՑՑ

1911 Ա Պ Ր Ի Լ 30 օր 16 Շաբաթ ԸՄԱՐ Լուսնի 2

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻԻՆ «ԽԱԹԱՖԱԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ-ԿԵՆՏՐՈՆԸ

յայտնում է իր օրհնութիւնը, գոծութիւնը եւ շնորհակալութիւնը այն բոլոր նւարիս հաւասացեալներին եւ անխաղախ մեր հետնորդներին ու համախոհներին, որոնք Չափի սօներին՝ երբ իրանք զարնանում էին—մեզ չմոռացան եւ ումանք հեռագրեր, ումանք նամակներ, ումանք այցկարժեր եւ ումանք էլ բաժակահաւեր ուղղեցին մեզ: Խնդրում ենք Ամենակառօղից, որ նրանք միջ բարեկամասիկ ու կենսաւրախ անցկացնեն այս եւ նման հանդիսաւոր օրերը յուրախութիւն ազգիս մերոյ, եւ ի փառս ամենայաղթ կուսակցութեան, ամեն:

Ստորագրեց՝ «Դս դարու իմ—թող էտինց ըլի» ԳԱՍՊԱՐ ԿԱԼԱՏՈՒՉՈՎ

ՊԱ-ՊԱ-ՊԱ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

- 1. Յովհաննէս Թումանեանին բարձրացնում ենք չորս էսաժի: 2. Լևոն Մելիք Ադամեանին շնորհում ենք մի շողակնազարդ մէղալ՝ մէջը նկարած «յիսուն ոսկի»:

- 3. «Սուրհանդակի» հրատարակիչ պ. Գէորգ Չիլինգարեանին տալիս ենք արժուքեան տիտղոս: 4. Մելիք-Ազարեան Ալէքսանդրին շնորհում ենք վեղար: 5. Տփրեմ եպիսկոպոսին բախշում ենք «բոնօրու կօլօփ»: 6. «Գուտեմբերգի» հիմնադիր Գալտեանին բարձրացնում ենք մինչև 16 ասփնան: 7. Համբարձում Առաքելեանին տալիս ենք «համբերութեան բաժակ»: 8. Մեսրոպ եպիսկոպոսին շնորհեմք ոսնակապի գօփ: 9. Չաւէն վարդապետին տամք փորակապի ժապաւէն: 10. Տէր Դիւանսիոս վարդապետի Թելեթու նշանակիմք մինչ ի կասարածն աշխարհի վանայր եւ թամաղա: 11. Տէր Գեղամ վարդապետին աքտորեմք երեք հարիւր յիսուն եւ վեց տարով ի վանք Սեանայ, ըստ օրինակի Սինդոի հայոց էջմիածնի: 12. Սամսոնի Չերէզեան շնորհեմք լանջախայ: 13. Ինքս ինձ պատւեմ վի լաւ նաւով, իրա կանաչով և պանիր ու հացով: Գլխաւոր շնորհաբաշխ ազգային գործոց և գործողաց՝ Մաղոս ծայրէիծայր արեղայ

17 (կիր.) Բժ. Օ. Շրէյլը յայտնում է, որ 606 օգնում է շուկայով հիւանդներին. որովհետև նա 3 կնոջ վրայ փորձեր է արել և 3-ն էլ մեռել են: 18 (ը.) Հայ ազգի խնդրանօք «Պաթարալի» կարեկատուների կծարօլ նշանակած է «Գիւղատնտեսի» քաղաքատնտես խմբագիրը: 19 (դ. 2.) Ինչպէս լուս ենք վրայը իր ներկայացումը տալու է Չինաստանի Պէկինում: Ազնականների թատրոնի համար վերջրած տոմսակները պահպանում են իրանց ոչօր Պէկինի ներկայացման համար: 20 (դ. 2.) Շուկայով տունելու է կարօյի թամաղալութեան Յժամեակը: Յօրեխանական հանդէսը կատարւելու է Երևանեան հրապարակում: 21 (ե.) Ինչպէս չոյց է տալիս ստատիստիկան Չատկահան տօների առթիւ թիֆլիսեցու կէտը կլպի է վաճառականը, մէկ շորորդականը տերտէրը, իսկ Պապաճը՝ տան տէրը զընապանը և ուրիշները: 22 (ուրբ.) Երեթականի սղութեան պատճառով ժամանակաւորապէս դադարել է Բախշի «Բիրաո» թերթը: Յիշատակարան Անցեալ շաբաթ այնպիսի ջրտեր և անձրևներ եղան, որ ընչ էր մնում Չատկիւր յետաձգւէր անորոշ ժամանակով: Աստղագէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ Փարեմուզ

ՇՆՈՐՀԱԻՈՐ ԶԱՏԻԿ

Շնորհաւոր Զատիկ և սուրբ Յարութիւն,
 Կրմաղթեմ թերթիդ յարատեւութիւն,
 Կալատուզովին—անվեհերութիւն,
 Սուրբ Էջմիածնին—միաբանութիւն,
 Օրմանեան արհուն—հայրապետութիւն,
 Մատթէոս վ.—ին—անհամութիւն,
 Թայֆայահանաց—աներեսութիւն,
 Մեր հայ թերթերին—վիճաբանութիւն,
 Յորեկաններին—աճեցողութիւն,
 Հայ թատրոններին—միշտ դատարկութիւն,
 Իերասաններին—հայագիրութիւն,
 Քանաններին—կրկնամուսնութիւն,
 Իեղեցիկ սեռին—մարդաթողութիւն,
 Իմաստագիրներին—կաւալերութիւն,
 Կանանց և աղջկանց—շաւարմուրութիւն,
 Համալսարանաց—գասադուրութիւն,
 Իսկ ստուգենտներին—բանտարկութիւն,
 Հայ կուսակցութեանց—Փաւորութիւն,
 Եւ ժողովրդեան—լուս համբերութիւն:

Լիլիպուտի

Բ Ա Ր Ի Լ Ո Ւ Ս

IV

էն օրը մնամ ասի, վուր իմացայ թէ
 Մոսկովում Դերիշ անունով մի մարդ
 կայ:

Հախ Աստձու, իս էն փիթրին էի, թէ
 էտ Դերիշը մի թուրքի մօլլա կուլի,
 համա ինչ, հինց վուր տեհայ լօթուն
 էն շախմատէ իստացի, վուր դուրթ է
 թուրքի մօլլա չէ, համա հայ է—էս
 սնաթիս, հայութիւնն էլ լաւ բան է.
 վուր մարթը իր հաւտի վրէն դայմ է,
 դա մինձ բան է. այ միը գուրձիճե-
 րից վուրին գուզէք վիկալէք աբա հի-
 մի ո՞վ է հայ մնացի,—գիփ էլ մլթո-
 նացիլ ին, համա միը Դերիշը էտինց
 չէ, զգլաշի հուզեմէն գնացիլ է ու-
 սէթու սրտում ու էնդի հայացիլ է:

—Գասպար ջան, գիդիս թէ վո՞նց իմ
 սիրում Հայաստանը ու հաուց բանիրը,
 կօսէ, էնդգամ, էնդգամ իմ սիրում,
 կօսէ, վուր Ամբարձում բիճա Առաքե-
 լովի էսդգամ (շանց տեց «Մշակ»-ի
 նումերները) ուշունցներին իօկի ջու-
 դաբ չիմ տալի, կօսէ, չունքի հայե-
 վար ուշունցներն էլ իրինց լազաթը
 ունին, կօսէ:

—Ի՞նչի իս էտինց խորագ խարջում,
 ասի, աբա՛ հայեվար գազէթներում
 ուշունցնիր իփ կան, ասի:

—Հէր օխնած, մաշ հայեվար գազէթ-
 ները ո՞ւմ համա ին փեչատում, վուր
 ուշունցնիր չլին, կօսէ. մաշ էլ ո՞վ
 պտի կարթայ, կօսէ:

—Բաս քու խիլքումը բանի զօրու-
 թինը էտինց է էլի, հայեվար կարթում
 ին էնդուր՝ վուր ուշունցնիր իմանան,
 ասի:

—Դիմիս, դիմիս, էտինց է, կօսէ, այ
 իս հայեվար ուշունցների հոքուն մե-
 նիմ, կօսէ, լազաթ է լազաթ Նար-Բեյի,
 Պորէն եպիսկոպուզ Ստէփանէի, Գորու
 տէր Ստեփանի, Բենիկ վարթապետի
 քարոզնիրը էնինց համով հատով չիմ
 լսել ու չիմ լսում, վունց վուր հաուց
 գազէթներու ուշունցները, խրատնիրը
 ու գէլի աւետարանները, կօսէ, աւե-
 լին, աւելին կօսիմ, կօսէ, իս՝ էստի
 ունիփստատումն էի, կօսէ, Մուրում-
 ցովը, Մանկիովը, Չուպրովը, Եան-
 ջուլը, Ղամբարովը, Պոստովը էնինց
 մասալաներով չին կանայ, կօսէ, սիրե-
 լի շինի իրինց կարթացած խուրը տկե-
 մէն գրքերը, կօսէ, վունց վուր հայ
 գազէթնիրը, կօսէ, հիմի ուզում ինք
 վուր մէ հայեվար գազէթ էլ էստի,
 Մոսկովում մոգոնիր, չունքի խիստ
 ինք ծառաւցել էտ ուշունցներուն հա-
 ուց գազէթնիրը մինչկի քաղքեմէն
 էստի գալիս է, կօսէ, համա ու հուտն
 էլ էլի գնում է, ու էդով էլ բաւական
 ինք, կօսէ:

—Համա, պարուն Գասպար, իս էկիլ
 իմ ձիգ պտիմ ինտերվիու անիմ, կօսէ,
 գէթաղայ, հարցերիս ջուզաբ տէք,
 կօսէ:

—Բաշուստա, կու տամ ասի. համա
 տողին մէ աբասից պակաս չիմ վերց-
 նի, ասի:

—Մինք դաբուլ ինք, կօսէ, ասացէք
 ինթրեմ, կօսէ, ձիը խիլքումը էս սնա-
 թիս հաուց ասիք վո՞նց է, կօսէ:

—Լաւ է, ասի, լաւ, շատ լաւ, տա-
 բութին խիստ չունէ, ասի, մէ մէ ջէր
 թէ վուր տաբութին ըլում է սորումած
 «Հորիգոնի» քարեխնամ կառավարու-
 թիները ետիս ին դնում, ան թէ չէ՝
 սառ ջրում լողցնում ին ու էտ բանը
 օտկում է, ասի:

—Լաւ, կօսէ, էջմիածնում կաթղկո-
 սը ինչի մեռաւ, կօսէ:

—Պաթրու համա, ասի, էկաւ նա-
 չարը ու տեհաւ, վուր էջմիածնում ա-
 մեն մի աշխարհական թէ հոքեորական
 կաթղկոսութիւն է անում. ու ինքը կի
 անումով է կ.թղկոս ու ամանումը
 չկայ, ասի, դարդ արաւ, դարդամիշ
 էլաւ ու մեռաւ, Աստուձ հոքին լուսա-
 ւորդ, ասի:

—Հիմի ումը նընդրինք կաթղկոս
 վուր լաւ ըլի ասում է: ԵՐԿՐԵՅԻՆ

—էս սնաթիս, մէ կաթղկոսութիւնն
 գնալ չի ըլի, ասի, էնինց պտի անինք,
 վուր մէ դուժին կաթղկոսներունինանք,
 չունքի, ասիլ բաները հեստի ին վուր...

—Վո՞նց, վո՞նց, ասա գէթաղայ,
 ասմէ:

—էտ բանիրը վուր ասիմ տրիքոնին
 (տողին) տաշ շաշի կու աունիմ, ասի:

—Մէ մանէթ կուտաս, կօսէ:

—Ձեր փիթը անիմ ու իժում կօսիմ,
 ասի, մէ քիչ էլ իս քիգ անդերիու ա-
 նիմ, ասի:

—Համեցէք պատրաստ եմ, կօսէ:

—էստի խիլիմ հայիր կան, հարց-
 մունք արի իս:

—Վահ, հէր օխնած հայերեմէն ա-
 ւել էլ ո՞վ կայ. Մոսկով քաղքի կէսը
 հայեր ին. իրիք ժամ ունին, մէ գե-
 րեզմանատուն ունին, մէ կլուբ ունին,
 մէ ճեմարան ունին, մէ անկելանոց
 ունին, ստուգիւտներ, ստուգիւտկա-
 ներ, առուտրականիր, Փաբրիկանտնիր,
 պրօֆեսորնիր, տէրաէրնիր, ուշիտել-
 նիր, ու էլ ինչ գուզիս կու գթիս,
 կօսէ, հեստի բուզը ու խիար կայ՝ հենց
 էս ձին ձմեռը, կօսէ, վուր քաղքումը
 մայսին էլ չիս գթիս, կօսէ:

—Հայիրը վո՞նց ին սպրում, համո՞վ
 ին, սէրո՞վ ին:

—Սեռով մածուն էլ ին շինում, ու
 դադումն էլ լաւ կուլի, կօսէ, թէկի
 մէկը մածնի քարխանայ շինի Մոսկո-
 վում, կօսէ:

—Մածնի քարխանայ.

—Հա՛ մաշ, մածնի քարխանայ. էստի
 մկների քարխանայ էլ կայ, կօսէ, գուր-
 ձը հայերու ձեռքին է, կօսէ, դադումն
 էլ լաւ, խիստ լաւ է, կօսէ: Ու՛ վուր
 էլի լաւ գրէի գուրձը, կօսէ, հայ ժուր-
 նալիստութիւնից ուփրօ դադումաւոր
 գուրձ կուլի, կօսէ:

էս խօսքերը խարջելումն էինք, իփ
 վուր միգ մօտ ներս էկան մէ փարա
 մարթիք թէ կնիկմարթիք—հէր օխնած-
 ները, էսդանցի մարթիքը իլաբի ջէհիլ-
 ները համ բեխիրն ին կուտում համ
 էրեսներին էնդգամ պուլբի, ալիը ու
 ումարիլ ին քսում, վուր չիս գիդում
 մարթիք ին թէ տղամարթիք. իլաբի
 վուր կնգդիրքն էլ գէրիէբի մագիէր
 շալվարներ ին հաքում:

—Պարուննիր, կօսէ, խօսից մէկը, վուր
 ուփրօ զոչադ էր աղաբ էկաւ, մինք էստի



Յոյս ունենք, որ մեր ազամարդիկը շուտով այս ձևի զգեստ կընագնեն—նրանք արդէն կանացի ընոյթ ունեն:

ունինք կուրք, կուրքի բանը բուրթ է, կուտէ, չունքի հայերի բան է, կուտէ, կուրք մոգոնեցին վուր էսդարցի հայերին միացնի, կուտէ, վիրշը դուս է-կաւ, վուր իրարուց բաժնում է, կուտէ, հիմի մինք գուզինք, վուր կուրքում պարուն Քալանթարին ճաշ ուտեցնէինք, կուտէ, քանի ջէր էտու համա էլ գրել ին թէ Քալանթարին մէ ճաշ ուտեցրէք կուտէ, ու չելաւ, չկանացին մարթիք հաւաքի, վուր ճաշ ուտեցնինք, կուտէ:

—Ինչի ասի, Քալանթարը, քաղցած էր վուր դուք ճաշ ուտեցնէիք ասի. հէր օխնած, գիղէք թէ գոկ է, կարծում էք թէ ճաշ չի ուտում իրենց տանը:

—Հիմի ինչ գուզիք էստի մեզմէն, հարց տւեց Դերիշը:

—Ձեր ջանի սաղութինը մենակ էն վուր կուրքի քրեհը չինք կանում տայ, կուտէ:

Տեհայ վուր բանը փուղի վրէն է, ասի.

—Իս քաղքումը վուր էի ասի մէ անդերձ գրել տւի, իմ միլիոնները պիտ բաժնէի, ասի, հիմի չունքի բանը էտինց է, վուր ձիւր կուրքի քրեհը պակասում է, մաշ կու աւելցնիմ ու ձիւր կուրքի համա էլ մէ էրկու միլիոն կու գրիմ—ի՛փ վուր մեռնիմ ստացէք, ասի:

—Վուրդանց պտինք ստանայ, կուտէ:

—Վուրդանց գուզիք ստացէք, ասի, հէր օխնածնիր, իս էնինց խալաթ սրտի մարթ իմ, վուր ձիւր խնթրքին ականջ իմ դնում ու ձիւր կուրքի համա էրկու միլիոն իմ անգերձ անում—գուք էլ իմ մահէն եղը վիկալէք էս փուղը, կուրքի վրէն ծախսեցէք:

—Սաղ ըլէք Գասպար աղա, սաղ սալամաթ ըլէք ձիւր «Սաթարալով», ձիւր օղուշաղով, ձիւր...

—Ձէ, չէ, ձէնիրդ, էտ խօսքերը միք խարջի ասի, հէր օխնածնիր, իս խօս մէնդուր չիմ տալի, վուր ինձ գուզիք, իմ վրայ խաղիր մոգոնիք. ի՛նչ է իս սուտուցացիլ իմ, վուր ինձ մատով էք շանց տալի ու օխնում էք. իս էլ վուր տալիս իմ թէ ձիւր թէ ասկին, թէ մարթկութինին իմ սակութար սրբտիցն իմ խարջում. էստի իմ ջիբը գուրձ չունէ, ասի, չունքի ասած է սուփ գրքի մէջ, լաւութիւնը էնինց սուրա, վուր աչիդ արածը ձախը չիմանայ, իս էնինց իմ Ժամ գալիս. ինչ վուր սրտիցս գալիս է, ջիբս վունչի-

չից վուչինչ չէ իմանում. բան:

—Աստուձ փառաց պահէ, կուտէ:

—Ս...ս...

(Էլի կուլի)

Գասպար Կալանթար

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Գասպար աղայ.

«Սաթարալային» 14 նոմերին մէջ փառան սև խուրձի պէս տարտղնիս կը բուրբուր թրթիս կը, բիթունի խաթրը շահիս կը, հմը չնեղանաս, դուն ալ յերեսպաշտութեն կենիս կը, 42 տարի է ազգի պղնձները զալայիմ կը. «Սաթարալին» բաղիհաւայ դուրլուղ կենիմ կը, ի՛նչ գլլէր ատ զոջայ ծովից պուրամ ջուր ալ ինձի տայիր: Եղբալ չուհիմ, եղբալ. յանտէր մնայ իմ եղբալը: Աստնք մնան, ես հրամանքիդ հետ յուրիշ մասլահաթ ունիմ: Աստուձ օղորմի հոգուն, լուսը կաթէ գերեզմին, մեր հոգեոր տէրը մեռաւ, էջմիածինը որը մնաց, սգուր է: Հիմի չորս թարաֆէն Փանառները վառեր Հոգեոր տէր փրոտաին կը ու չին գտնի: Հէջ մէկին ալ չին հաւնի. վերը կարճ է, վերը յերկան է, վերը ուսերէն չիդէ, վերը հայերէն, վերը խամ է, վերը ցաւաքեար, վերը ջահէլ է, վերը պառաւ, վերը սառթ է, վերը շատ միլայիմ... Հարնայիսա բիթունին մէ պօշմ կայցնին կը, մէ մահանամ դնին կը: Ըսել գուղէ՛ սով է. հէջ մէ շէնքով եպիսկոպոսմ չին կրնայ գտնի, ասոր սապապու քանիմ հատ մանգանրէշ բիթարները գուզին օր լաւ աշխարհականմ ջոկին, մէ օրւայ մէջ շինին սարգավագ, տէր-տէր վարդապետ, եպիսկոպոս ու բինդանբերայ կաթուղիկոս: Ջանմ, ատ բոյախանի կարաս է, ի՛նչ է, օր Յակոբ աղային կոխէք մէջը, տեղոս տեղ ներկէք, վեհափառ շինէք, թախթին նստեցնիր: Դէ ըսէք տեսնիմ. ատիկ մեզի եարամիշ գլլի: Ախր յերէկ Յակոբ աղայ, ասոր սրբազան Յակոբ. յերէկ պարոն Յակոբ. ասոր վեհափառ Յակոբ, էղմու ույմիշ էկմու: Յերեկ Յակոն կուպի մէջ բազարայ խաղար կը. ասոր ի՛նչը կաթուղիկոս գլլի: Յերեկ Յակոն չախալ խանումին հետ բուլաբրին մէջ գեազմիշ գլլէր կը, անոր հետ սիլիբիլի կինէր կը, ասոր հոգեոր տէր գլլի կը: Յակոն յերէկ զոնաղութենի մէջ թամաղայ էր, հարբիւր էր, շալկած տուն տարան, ասոր պատարագ կրնայ էնէ: Յակոն յերէկ գաստէնիցին մէջ մաղամ մաղմաղէնիբի հետ պօլկա-մաղուրկայ տոճկէր կը, ասոր կրնայ մենակ քնի: Դէ, ախպար, շաս եանղիշ էք. ասպէս մօզնի հոգեոր տէր չի յըլլի, ասոր ձեռը ես չիմ համբուրի: Յակոն կաթուղիկոս եղաւ թէ չէ, իրեն էգ ու վոոց չին եարան եօլդաշները թոփ պիտի էնէ գլլտուն, օր անոնց հետ եարանութեն էնէ. անոնց հետ սակամիշ յըլլի:

—Յակոն, միտքդ է օր պօլկայ-մաղուր-

կայ խաղալիս ոտքդ պլստայ վուր քնեց պօլին վրան, յերկան փուար, ինչքան խոնդացինք. էրնեկ էր օրը, զոնաղութէն:

—Հաղար էրնէկ, Մաշօ խանում. ես գիտէի լօշի մէջ հալւայ կայ. ինձի բերին նաբախար կոխին, տէյմօր մահս պիտի քաշիմ աս յերկթէ լուծը:

—Աստուձ համբերութեն տայ, Յակոն ջան: Ախր ներողութեն, վեհափառ պիտի ըսիմ, մտէս գենի. բերանս սորվիր է. գիտիմ թէ գենայ մեր կաւալբ Յակոն իս: Դէ մնաս բարով, վեհափառ տէր:

Յակոն վեհափառ դառաւ թէ չէ, իրեն օրը ըշտայ ասպէս եարանութենով պիտի անցնէ:

Ղալայի Մարգար



ԲՈՒՆԻԱԾ ՍՍՏԱՆԱՆ

«Bndepesti Hirlap»-ը պատմում է Վէնգրիայի Տրէքցիին կայարանում պատահած հետեհալ դէպքի մասին:

Մի տեղացի գեղջկուհուն ամուսինը Ամբրիկայից ուղարկում է 5000 կրօն: Փողերն ստանալու համար կինն ուղևորում է մօտակայ քաղաքը, բայց այնտեղ պահանջում են նրա անձնաւորութեան մասին վկայական: Վկայականը ստանալու համար նա դիմում է տեղական դատաւորին: Դատաւորը տալիս է խնդրած վկայականը և խորհուրդ է տալիս գեղջկուհուն փողերն ստանալու մասին ոչ ոքի չպատմել, որպէսզի չգրաւի գողերի ուշադրութիւնը:

Այդ օրը ինչ որ բան արգելք եղաւ նրան գնալ քաղաք փողերն ստանալու: Կէս գիշերին գեղջկուհուն զարթեցնում է ինչ որ խշխշոց և երբ բաց է անում աչքերը, վախից մազերը բիզ-բիզ են կանգնում: Նա իր առաջն է տեսնում եղջիւրաւոր 2 շատ երկար ստանաներ: Մէկը նրանցից գերեզմանային ձայնով ասում է հետեհալը:

—Ես սատանայ եմ: Գո ամուսինը գողացել է այդ փողերը. եթէ դու ինձ չես տալ զրանց, ես քեզ կըտանեմ դժոգքը...

Խեղճ կինը խնդրում է սատանաներից սպասել մինչև վաղը:

Հետեհալ օրը գեղջկուհին պատմում է պօստային աստիճանաւորին բոլոր եղելութիւնների մասին. իսկ վերջինս կնոջն ոչինչ չասելով նախազգուշացնում է ոստիկանութեան:

Ոստիկանութիւնը կնոջ տանը պահ է մտնում և հետեհալ գիշերը կալանաւորում է երկու սատանաներին էլ, որոնցից մինը տեղական դատաւորն է լինում, իսկ միւսը՝ նրա բարեկամը:

Փարեմուզ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶՈՒՐՋԸ

ԿԻՆԸ ՈՐՊԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սրտի անհուն բերկրութեամբ և մտքի բիւրեղանման պայծառութեամբ կարգացինք պատուական «Սաթարալայի» մէջ ամենապատիւ պարոն Արդարեանի հիմնաւոր պատճառաբանութեամբ լեցուն այն յօդածը, որով պարոնը առաջարկում է ամենայն հայոց կաթողիկոսական գահի համար կինմարդ ընտրել:

Այս միտքը թէև նոր է, բայց և նոր չէ. բունակալական և այլ ժամանակները ոտի տակ են աւել կանացի շատ իրաւունքներ և եթէ իրերը իր բնական ճանապարհով ընթանային և ոչ թէ այսպէս ինչպէս այժմ է—մենք հաւատացած ենք որ կին կաթողիկոսներ էլ կունենայինք: Եւ ի՞նչի չպիտի ունենայինք, եթէ Հոովմայ պապերից եղել է և կին—հայոց եկեղեցու կաթողիկոսն էլ կարող է լինել կին:

Եթէ կին փաստաբաններ, կին բժիշկներ, կին ինժինեռներ, կին ծառայողներ, կին քահանաներ, կին շինոջնիկներ կան, ի՞նչի չպիտի լինեն և կին կաթողիկոսներ:

Սա ինչ բնութիւն է. սա ինչ տգիտութիւն է:

Յարդ մենք ունեցել ենք հայրապետութիւն, այսուհետև թող ունենանք մայրապետութիւն:

Եթէ կարելի է ունենալ հոգևոր հայր, ինչի չի կարելի ունենալ հոգևոր մայր:

Եթէ կարելի է ընտրել սոսկ վարդապետ-

ներին և կամ աշխարհականներին կաթողիկոսական պաշտօնի համար—թւում է, որ մի բարբաղդ կին առաւել ևս իրաւունք ունէ:

Չմոռանանք որ կանայք և տէրութիւններ և ազգութիւններ են կառավարում:

Վերջերս յայտնի է դառնում, որ կանայք աւելի քաղաքագէտ են, քան մեր բոլոր քաղաքագէտները:

Կանայք աւելի պատուասէր են, քան թէ մեր արքարհիները:

Կանայք աւելի ծանր են քան թէ մեր գերացած ու ուռած սևագլուխներից շատերը:

Կանանցից աւելի պատկառում են մարդիք, քան թէ տղամարդիկանց:

Կանանց առաջ մեր սևագլուխները, իրենց աւելի լաւ են պահում քան թէ տղամարդ կաթողիկոսների առաջ:

Այս տեսակ պատճառաբանութիւններ հազարներով և հարիւր հազարներով կարող ենք բերել և երբ այդպէս է, երբ դուք էլ սիրելի ընթերցողներ և համայն հայ ազգն էլ գիտէ, որ կին կառավարիչները աւելի էական յատկութիւններ ունեն, քան թէ ոչ միայն մարդիկ, այլ և աշխարհ տեսած, աւնուն հանած և հոչակած սևագլուխներ, ոչ ապաքէն լաւ կըլինի, որ մենք էլ կին կաթողիկոս ընտրենք:

Առ այժմ այսքան:

Կանանց իրաւամասարութեան պաշտպան տղամարդիկ.

1087 ստորագրութիւն:

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՀՈՂԱԲԱԺԱՆ

Սեղծ գիւղացոց զրկւածները,
Անտէր ու դուս կորածները,
Մի օր ժողւանս աէսի մօտ՝
Քրչոտ-փոչոտ, քոսոտ-մոսոտ.
Ահով դողով խօսք բաց արին,
Եւ խնդրեցին ոէս աղին:

Որ քիչ օգնէ զուրկ թշուախն...

Ռէսը ծանր տեղից շարժեց,
Մեծ փափախը ճակտին քաշեց.
Վիզը քորեց, դէմքն օլորեց,
Ձէբից հանեց կեղտոտ չիթը,
Մաքուր սրբեց կոպալ քիթը:

Եւ սկսեց առօք փառօք,
Իշխանարար՝ երկար ճառօք,
Պօսել կամաց,
Որ չիմանան՝
Շատ է հարբած:

—Գիտէք, այստեղ մի օրէնք կայ,
Լաւ չէ խօսել պարապ անշահ...

Գիւղացիքդ երկու ձայնով,
Պէտք է զրւէք մէկի դէմը,
Որ հաստատեմ ու աշխատեմ,
Քանի ուժ կայ առաջ տանեմ:

Դիտմամբ խօսք տւին միաբան,
Կուղենք բաժնել հողն համաձայն
Էլ ի՞նչ պէտք է լաւ թէ օտալ,
Ծեծ ու կռիւ, բունդ դալմադալ.
Մի տիրացու կանչէք թող գայ,
Համախօսը զրէ հիմա:

Համ գործին հիմք, համ էլ վկայ:

—Ա՛յ տիրացու, վերակացու,
Գրէ, որ հողը բաժնէն,
Արդար հաւասար փայ անեն.
Գրէ բաժանարար մարդկանց
Աջու աչքը ամուր խփած:

Նշան տալով խղճով մարդկանց,
Որոնք գիտեն հողը մաս-մաս,
Ու կըճանչեն խամ է թէ խաս.
Մէկը գէշ է, մէկը լաւ է.

Մէկը դռած,
Ու քիրաջ.
Սոսուռ աւաղ,
Հողը նւաղ:

ՈՐՈՇՈՅՑՆԵՐ

Պարոն Արդարեանի հիմնաւորութեան և ժամանակակից արծարծւած հարցին կին կաթողիկոս ընտրելու վերաբերեալ մենք ևս համաձայն ենք:

Վաղուց, շատ վաղուց կարևոր էր, որ այդ հարցը շոշափւէր, մեզ թւում է, որ մեր կուսակցութիւնները, որպէս իսկական ազատամիտներ և սոցիալական հիմունքներ դաւանողներ ընդառաջ կըզան այդ առաջարկին և մենք շուտով կին կաթողիկոս կուսենանք:

Կեցցէ կնոջ նւաճած իրաւահաւասարութիւնը. կեցցէն կանացի հարցերի պաշտպանները.

Կեցցէն կին կաթողիկոսները:

Կեցցէ «Սաթարալան»...

«Ազատամիտ կուսակցութեան աւելի պարզամտական Ֆրակցիայի անդամներ:

ՄԵՆՔ ՄՍԱՅԱՆՔ ՀԵՏԵԻՆԱԼ

ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ


Բագու, 10 ն ապրիլի—առ. 9 ժամ, 5 բ.

«Սաթարալայի» առաջարկը կին կաթողիկոսներ ընտրելու վերաբերեալ, խորապէս մխիթարեց մեզ. այսպիսի մի ծանր ու տագնապալից ժամին հազիւ թէ այլևս աւելի կարևոր խնդիրներ առաջ գային քան թէ այդ՝ աւելի հմտալից առաջարկութիւնը: Շատ ճիշտ է, որ կին կաթողիկոսը աւելի լաւ և բեղմնաւոր գործեր կարող է կատարել, քան թէ անփորձ վարդապետ-

Բաժանարարք նիստը բացին,
Ու խորհեցին և խօսեցին,
Ապա գործին ձեռք զարկեցին:
—Այժմ պէտք է Շատախօսին,
Կիրակօսին, տէր Մարկոսին,
Մեծ տէրտէրին, տանուտէրին:
Ռէս աղին, որ մեզ աշենք,
Քիչ էլ մեր խնամուն քաշենք...
Սրանց պէտք է լաւ լաւը տանք,
Ինչո՞ւ քաշենք վերջն ամօթանք:

Հէնց այդ կարգով,
Իրենց վարքով,
Լաւ ու ընտիր,
Բժախնդիր,
Ահնայ արին,
Ու փայ արին:

Դիտցածներին լաւն ու բօլը.
Աղքատներին քարն ու չոլը,
Հարուստներին սևահողը,
Ձրկւածին լեռան կողը
Ու անհողը, քար խոպանը,
Անբեր, անպէտք, ու անբանը.
Մարի լանջից,
Քարի քնջից
Ու դաճից,



ները, անտակտ տէրտէրները և կամ դատարկապորտ սոսկ աշխարհականները:

Առաջարկում ենք ընտրել կաթողիկոս Գեօգալ-Աղաբաշուն:

Պատրաստ ենք սրա թեկնածութիւնը պաշտպանելու համար արեան վերջին կաթիլներս չխնայել, այս ժողովը, որ ուղարկում է սոյն հեռագիրը՝ միաձայն որոշեց Ջատիկ կիրակի առաւօտեան յատուկ պատգամաւորութիւն ուղարկել բոլոր վարդապետների և եպիսկոպոսների այլ և պարոն Գասպար աղա Կալստուզեանի մօտ, տրամադրութիւններ ստեղծելու:

Ողջոյն կին կաթողիկոսացուին:

Ողջոյն կանանց էմանուսիպացիային:

Ողջոյն «Սաթաբալային» և նրա աշխատակից պարոն Արդարեանին:

«Բազուի կանանց ընդհանուր ժողով գումարած, Ջատիկ օրը եկեղեցու գաւթում»:

III

Մոսկա, 12 ապրիլ գիշերայ 13 ժամին:

Պարոն Միւրդաշիւրի մօտ նիստ եղաւ, պարոն Արդարեանի առաջարկութեան վերաբերեալ կին կաթողիկոս ընտրելու հարցի առթիւ:

Սօսեցին Առաքել Դերեխ, Արսէն Ոսկու Ջօն, Արծաթէ Մոն, Արճիճէ Դոն, Պոնձէ Բոն և բոլոր այլ և այլ պատգամաւորներ, որոնք գտան, որ աւելի յարմար է կին կաթողիկոս ընտրել և նոյն իսկ հարազատ կըլինի եկեղեցական ոգուն քան թէ անփորձ վարդապետներ և կամ սոսկ աշխարհականներից

ընտրեն այդպիսիները:

Ժողովը միաձայն առաջարկում է այդ հարցով զբաղել և կամ համազգային ժողով գումարել—հարցը առաջ տանելու համար:

Մեր կողմից ներկայացուցիչ կըլինի պ. Նիկոլայ Միւրդաշիւրը:

Լիազօրներ՝ Միւրդաշիւր:

Գիւշակ Յովհաննիսեան
պրօֆ. Սալաթեանց
Գիտական Գիտունեանց:

IV

Աստրախան:

13 և կէս ապրիլի 3 ժամին 75 վայրկ:

Արդարեանի առաջարկութիւնը մեր սըրտիցն է: Ընդունում ենք. սիրովս և ամենայն յոժարութեամբ:

Բանանայական ժողով
Գ. ք. Մկրտումեան
Գարտաշեան,
Ասլանեան:

Էջմիածին, 14 և կէս ապրիլի:

Ուշ ստացանք «Սաթաբալան» և հազիւ կարողացանք նոր միայն իմանալ պարոն Արդարեանի առաջարկը—կին կաթողիկոսներ ընտրելու վերաբերեալ:

Աստուած օրհնեսցէ առաջարկողի ծնունդը, որ իսկապէս եղել է մեր քանդած վանքի և ազգային անտեսութեան ու խնդիրների նախանձախնդիր: Մի կին կաթողիկոս աւելի շատ բան կարող է շինել, քան թէ պողպատէ կամքեր ունեցող վարդապետներ,

եպիսկոսներ և պիւժիններով աշխարհականներ:

Առաջարկում ենք մեր ուղեւորները թիւն. եկեղեցական համագումարները դէմ չեն կին կաթողիկոսներ ունենալուն:

Ամբողջ միաբանութիւնը ճեմարանի մանկավարժական խումբը այլև պլանի և այլ տեղերի ծառայողները համաձայն են այդ առաջարկին:

Աւելի լաւ և ժամանակակիցը երբէք չէր լինի:

Աստուած օրհնեսցէ ձեզ—և պատական խմբագրութիւնն:

Էջմիածնեցիներ

Մենք ստանում ենք հեռագրներ. և այս մասին զանազան կարծիքներ:

Ժամանակը
մօտ է:

ով որ կուզէ թող խօսէ:

Մամրագրութիւն

—Այ մարդ, ինչ անպէտքը դալուստիկներ ես առնում: Պէտք է խոստովանել, որ դու առհասարակ ճաշակ չունես ընտրութիւններ անելու:

—Այո, շատ ճիշտ է, այդ բանը նկատելի էր մանաւանդ այն ժամանակ, երբ քեզ ընտրեցի:

Փարեմուզ



Ուր չի բուսի
Կանանչ արօտ՝
Ոչ ծիւ, ոչ խոտ:

Գործը հասաւ վերջաբանին,
Մէկտեղ կանչին գեղականին.
—Եկէք վարէք ձեր արտերը:

Ու մոռացէք սև դարձերը:
Հաւասարելն էս ու էստ,
Ոչ որ չստէ փայլս փիստ:

Էլ չխօսիք վարար-վարամ,
Պատառ հացը շինէք հարամ:
Վարէք, ցանէք, բօլ-բօլ կերէք,
Ամբար շինէք տեղաւորէք:
Հող առնողներն իմացան,
Էլ լուռ կենալ չկարցան:

Գոռ գոռացին,
Ձիւ բոռացին,
Ու բոռացին,
Կէսն էլ անձէն:

Յիշոցք, անէծք, խիստ նեղացած,
Ու կատաղի գազանացած.
—Ձենք ուզում էք վատ հողերը,
Քարի, քարի լերկ կողերը:

Առանց դրանց շատ ունինք գէշ,
Կճուզէք եկէք տանք ձեզ փէշքէշ...

Գիտենք կուզէք միշտ աւելորդ հարկ
Գջել մեզնից, թողնել մի պարկ...
Արդէն այդ բանը կայ ու կայ,
Մեր ապրուստը մեզ չէ վկայ,
Գիտէք չունենք ոչ փող ոչ դօս,
Մեր բաժինն է բեղեառ ու կոս,
Ոքի համար անա կասենք,
Առնողներս քանի հոս ենք...
Խեղճ ու թշուա...
Ակաս-մակաս,
Այդ էր պակաս...
Աչքերը լաց,
Ու կարկամած,
Եւ միշտ քաղցած.
Տունը բրիշակ՝
Ինքը մշակ»:

Քայց աղքատին ձվ է աշող,
Նրա հոգու դարդը քաշող:
Քանի որ կան Յովէն, Նիկէն,
Օրէնագէտ Վրդէն, Կիկէն.
Թէ որ բանը հասաւ գառի,
Մամոնայի կամ կաշառի՝
Հողագուրկը հա միշտ կաճէ,

Ամեն անգամ փայլ փուշ է:
Քանի կազմեն պիտի քանդեն,
Ու միշտ զրկեն հողէն հանդէն.
Այ հողագուրկ, հա դու աշիր
Հալիւր, մաշիր, սիրտդ այրիր,
Թողդ քաշիր, մինչև ի մահ,
Էն դունիէն քեզ հող շատ կայ.

Շնածղ օրդ՝ ծնար ցաւով...
Անվերջ դաւով:
Հողի արով,
Տապակ,
Պապակ.
Ու ծարաւով.
Դէ օրէնքէ,
Շարժուն շէնք է.
Մէկը այսպէս,
Մէկը այնպէս,
Մէկը կապրի ալ վարդի պէս
Իսկ շատերը մերոնց շան պէս:
Մովսես Ղուկասեան





Տուն ու տեղի տէր դառնում
Ասկասէր մարթի անուն հանում:

Միասին—Վայ, վայ, վայ էս ի՞նչ է,
Ի՞նչ փիսն է էս վուխտը:

—Վիրչը ի՞նչ վուր գալիս է,
Կաթղկոսին էլ բերում ին—
Խրիճ կաթղկոսներից
Հազար թուփեր էլ ին ուզում:

Միթո՞մ ջափահասերձ
Միթո՞մ ծախսած փուղիբը
Միթո՞մ խարջած քրթամները...

Միասին—Վայ, վայ, վայ էս ինչ է, ի՞նչ
փիսն է էս վուխտը:

Ամեն

ՔԱՆՆԱԲՆԵՆԵՑ ԱՐՁԱՆԵՆՔՆԵՐ ԱՉ ԱՐՆԱՅԵՑ

- Ի՞նչ է ափսոսում «Հորիզոն»-ը.
- Ո՞վ է տարածում Համբույի փեշակը.
- Ի՞նչը դադարեցրեց հանրամատչելի «Կայ-
ծեր»-ը.
- Ի՞նչն է յոգնեցնում ընթերցողի միտը.
- Մեր թերթերում ընդհանրապես ի՞նչ կայ.
- Ուր են լցել աւերիչ ցեցերը.
- Ո՞վ է վերջապէս վարելու մայր աթոռի
դեկը.
- Ի՞նչն է ծառայում հայ արտիստին իբր
համալսարան.
- Ո՞վ է ընդհատում հայ պօէտի երգելը.
- Ի՞նչ է ուզում տէրտէրի աջը.
- Ո՞ւր փնտրել իսկական սէրը.
- Ո՞վ է չարիքների արմատը.
- Ո՞ր տեղից է խօսում գաւառական թըղ-
թակիցը.
- Ի՞նչն է ներկայումս աւերիչ քան ՎՈԴԿԱ-ն.
—ՐՈՅՎՈԴԿԱ-ն:
- Ի՞նչպէս կորաւ մեր հին Սպանդարը.
- Ի՞նչն է տէրտէրի կեանքի զարդը.
- Ի՞նչ է դաւանում իրիցկին Նատօն.
- Ի՞նչ է երգում հայ ПОЛУДЬВА-ն ի յուշ.
- Իսկ ի՞նչ է մրմնջում նա երբ ունենում է
bede.
- Ի՞նչն է աւերում չարութեան մանւածը.
- «Մաթաբալա»-ի հարածը:

Մարիկ

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՅՈՒՄՆԵՐ
(Վ. Շէքսպիրից)

Տգիտութիւնը Աստուծոյ անէծքն է, իսկ
գիտութիւնը—թեւեր, որոնցով մենք դէպի
երկինք ենք սաւառնում:

Յիմարը մտածում է, որ ինքը խելօք է,
իսկ խելօքը գիտէ, որ ինքը յիմար է:

Անմիտ խօսքերը երբէք երկինք չեն հաս-
նում:

Անմտութիւնը աղանջներ չունի:

Աւելի լաւ է քեզ յանդիմանն լուռ-
թեանդ համար, քան հայնոյնն՝ շատախօ-
սութեանդ համար:

Բառերը միշտ բառեր են:

Ժամանակը բոլոր բաների մայրն ու ոտն-
տունն է:

Մենք ժամանակի սարուկներն ենք, իսկ
ժամանակը գործողութիւններ է պահանջ-
ում:

Փորձառութիւնը ձեռք է բերում միայն
գործունէութեամբ, կատարելագործում է
ժամանակի ընթացքում:

Ժամանակը փորձւած դատաւոր է:

Ի. Բաբուրեան



Թորքաց դպրոցում

Վերատեսուչը գոհ հեռանում է դպրոցից՝
ուսուցիչը ուրախութիւնից ամեն մի պա-
տասխանող աշակերտին կոմպլիմէնտներ է
անում:

—Այ, բաշիդ սիրուն, դասդ լաւ պա-
տասխանեցիր:

—Միւսի, այ քեռակինդ փլաւ եփի՛
ես ուտեմ:

—Մի ուրիշին, այ մօրաքոյրդ մի լաւ
սուլամ եփի ես ուտեմ:

Եւ այսպէս պարսկական մի մի շողոքորթ
թութիւններ է հրամցնում իր սաներին:

Ռէյվազ

—Է՛, պարուն Հէրապիտ—Ի՞նչ ասիմ—
Ի՞նչ չասիմ, էլի կաթղկոսական նընդրու-
թիւններ է գալի, իմացած կուլիս թային:

—Իմացել իմ ու ջէր մի բան էլ աւել.
հէր օխնած, պարուն Կարապիտ, էն էլ իմ
տեհի վուր փուղեր ին հաւաքում միթո՞մ
թէ... ու էտ փուղերի մէ մասը զրգում ին
Ստամբուլ հոստոններուն բաժնեւոր նընդրու-
թիւններուն իրենց ձէն տալու ու մի մասն
էլ տակոյն ին դնում.

—Տակոյն ին դնում...
—Մայ, տակոյն ին դնում:

—Իժում էտ վունց ին անում:
—Հէր օխնած հետտի իս արմանում մի
մինձ բան ին մոզոնում, տակով դնելու
արհեստը միդ մօտ հետտի է ընդունւած
վունց վուր ունաների մէջ սամավուրից չայ
խմելը:

—Վան, վան, վան, իլաքի դրանց հոգուն:
—Հոքի ունին, որ հոքու համա իս խօ-
սում:

—Վա, բաս անհօքի ի՞նչ:
—Փիէ՛, սօ վուր հոքի ունենային խօ էլ
էտ թաւուր պօլէտիկուրի բանիլը, չէին անի:

—Գանա բանը էտինց է:
—Էտինց է էտինց, պարուն ջան:

—Վայ, վայ, վայ—էս ինչ է:
Ի՞նչ փիսն է:
(միասին) էս վուխտը.

—Հիմիկայ միթ ժամանակ—
Կաթղկոսներ ին ջոզում—
Ու փուղով առնում ին
Պատգամաւորների ձէնիբը...

Միասին—Վայ, վայ, վայ էս ինչ է—
Ի՞նչ փիսն է էս վուխտը.

—Աղա մարթիբ դոնէդու
Ընկած փուղ ին հաւաքում:
Թէ ի՞նչ է միթո՞մ կաթղկոս
Պիտին ջոգէ հուզուրում—

Միասին—Վայ, վայ, վայ էս ինչ է
Ի՞նչ փիսն է էս վուխտը.

—Հաւաքած փուղիբքմէն
Ձէր իրենց միչն ին բաժնում—





НОС НОН
А МЕ !

«Սաթարալան», «Սաթարալան» — իսկապէս որ խաթարալա է:

Թ Ի Ի Ր Գ Ի Ա Ն



— Զանգը, քիչ անկու եմ՝ ինչո՞ւ էլ չգիտեմ — Ալբանիային սաստում եմ, Աբաբիան է ոտի կանգնում. Աբաբիային եզմում եմ՝ Ալբանիան է գլուխ բարձրացնում — էլ շաննիք էն միանեքը...

ՄԻ ՆԱՄԱԿ

(Գտնուած Սարոյի մանրավաճառատանը)

Իմ աչկի լիս Նէնէ ջան!

Հենց Թիֆլիզա շահարն էկա թէ չէ,—պահ, քննէ եքա, հաշամաթ նստածք ունի էս բրիշակ երգիրը. հն, էկա լաւ գործի կայայ.—ըստեան չեւ Սղնաղ օմնիբուզի եամշիկ եմ. դօնլուզս ա 10 պլօլիկ էրծաթ մանէթ, ձիանոնց գարին, շուրը, կնուտը, հացս ու գարարդին-փափաղս, բիրադի խօզէյսկի ա, լաւ խմող ախպեր տղերք ունեմ և էլ շատ են սիրըմ ինձ, չունքի հարիերդա մագարիչ եմ առնըմ: Էրեգ, ճամփին Կակարեթըմը օմնիբուզին ոտն արինք մխելի հացը-մաց ու գինի փչացրինք, հախ ա եդո կօզլիցը վէր ընգայ, դունչս խարար արի, միայն հմիկ շատ լաւ ա:

Եար ջան! աղաքի ամսի դօնլուզիցս դար-կըմ եմ մի մանէթ ու էրկու աբասի Սլօ-պուզանց դարփին Օսէփի ձեռով և խնթըր-ում եմ քեզ հմար առնես Սարօի դուքանի-ցը կանւի թելեր, քորոցներ ու մաստակ, երեխէքի հմար մէյա, ապնի հմար մի լաւ չիբլի գուլս, ապնի հմար մի պաչկա լաւ, զալատոյ կրեպկի բունօթի, չայ, շաքար, նաւթ, սապոն, աման-չաման, կճուճ-բը-զուղ... քիչ էլ գինի-արաղ. առուտըմը խափէք ոչ հն...

Կարըմէք ինձ հմար էլ մի էրկու լաւ գաթա դու արէք գայ: Ատուզս՝ վգօնօք Թիֆլիզկի,

Նա Հարլարար, օմնիբուզնի Սղնախ,
Կանտօր, դազազ վանկօի մկիտանի
Թուշ դէմագէմ, եվօ բլակաուդի

Եամշիկ Դիվին (աղգանուճը անորոշելի)

Իմ սիրելի ջան! շատ կարօտով բարով եմ անըմ քեզ, ապնին, աղնին, լակոտ-լու-կուտին և բիրաղնուճ էլ մի դայիմ պաչըմ եմ, միայն մեր ճանաչների հետ գործ չու-նեմ, չունքի նրանք շաշ գեղացի են: Ես փառք Աստծուն ողջ-առողջ եմ միայն քո մասին նիգարան եմ, եփ որ աղատ-ւես, կնունքի ժամանակ գրի որ գամ:

Դէ քեզ տեսութիւն, զօչաղ կենաս, անուշ ջան! արուճով կենաս,—գզիր Սարօյին ու Տէր-Սարքսին տեսնելու հետե կաց: Իմ սաղ-սալամաթնութենի հմար աղօտկարար ըլես:

Մնամ քու մեծապատուութենի խոնար ծա-ռայ՝ Եամշիկ Դիվին (չլա տես ինչ դայդի գուափար եմ սվորել է...):

Մարիկ

ԷԼԵԳԻԱ

(Ժամանակակից բանաստեղծութիւն)

Դիշեր է, անձրև,
Սուերներն անձև.
Եւ իմ գլխի վերև
Քայլում է արև,

Չոր ծառի տերև
Տալիս է բարև...

Ա՛խ, սիրտ հիւանդ,
Մեռնում է անդարդ,
Յաւէտ ու անդարձ,
Ծնւելու վերամբարձ...

Յերեկոտ գիշեր,
Չլուած յուշեր
Ուրախ վաշեր,
Տրտում բաշեր՝

Թափառում են նորից,
Գալիս են ձորից,
Եւ փաթաթում
Իմ անդանդաւոր
Ոտներին կիկին...
Եւ աղանդաւոր
Համբոյրով փարում
Իմ գարշապարերին՝
Նազուք ու ցաւագին...

Օ՛ հեռու...

Ա՛խ, հեռու,
Դէպի առտ՝
Չուր խմելու...

Ա՛յ, իմ յուշեր,
Տրտում գիշեր,
Ուտելու ձկներ
Կարմիր ձևեր
Եղոտ փլաւ
Շրխափաւ

Դէ կուշտ կերէք,
Լաւ կշտացէք...

Եւ ապա,
Անհապա,
Հեռացէք,
Գնացէք,
Հեռացէք,
Գնացէք...

Թողէք ինձ մենակ,
Որ ես լամ միակ
Իմ ցաւը տրտում
Սաւարի սրտում...

Բայց անձրևն անընդհատ,
Մաղում է անդարդ...
Եւ տխուր ու տրտում
Ունում են իմ սրտում

Ցաւերս անմահ,
Գարդերս անահ,
Ու մէկ
մէկ,

Եւ բիկ
բիկ
Մեռնում են թախտոտ,
Մարում ծիծաղկոտ...

Յօն-Սեփեհնան

Խօսակցութիւն
ՅԻՄԵՅՅԵՅ

Երկու թուրքի խօսակցութիւն
—Ա՛յ քեալբուլահի, լսել ես, որ Մաշադի Աբասի տղան օն վերստից (10 վերստ) աւարտել է, և դօխտուր դարձել:

—Լսել եմ, Հաջի, ամա նրանից մարդ չի գուրս գալ:

—Ինչո՞ւ:

—Դու մեռնես թէ սուտ ասեմ. 10 վերստ չէ քսան վերստ էլ աւարտի, նրանից մարդ չի դուս գայ:

—Ինչո՞ւ:

—Չունքի, դատը դատ չի (այսինքն վատ սերունդ է):

Չալաքի

ԱԶԻՉ ՕՐԻԱՅ ԹԱՂԱՅ ԽԱՅԱՐՆԻՐ

Պարոն Գասպար Կալատուղեանց, էս իմ էրկու խօսկա խնդրում իմ իմաց անիք, իմ տէս ու ճանանչ պարոն նընգիր աղպեր տղէքին... էս վուր իս շատ ու շատ շուր-հակալ իմ նրանց տղամարթութենեմէն ա-մեն գուրծով: Ասիլս դիփ էրկու խօսկ է, համա թէ վուր բան է մէ խօսկումը եան-դլիշ գամ, էս գլխեմէն իս ներողութիւն իմ խնթրում ձիգնից իմ պարոն նընգիրներ, ու վուշ էլ կուզիմ ձիւր քէփին դիպչիմ Աս-տուճ վուշ անէ, աբա էտ վուշ կանամ համարցակի էն էլ էս թաւուր ազիգ քէփի օրերին: Չունքի աշխարքիս մէջը էս թահրի բանիւր շատ է պատահում... հիմի իս էլ բիսկ արի ու ուզում իմ իմ իղբի խալիին իմ դուժիղնիրը սրգ անիմ: Չունքի էլ վուշ-չիչ չէր մնացի սաւայ կիսամաշ շուրեմէս, խուրը փքրի մէջ նընգայ, թէ վուշ անէմ, վուր էս թաւուր ազիգ օրին իմ տանն էլ մէ բան գթուի, ու սաւայ էս շուրեմէն էլ վուշիչ չէ մնացի վուր գրաւ դնիմ.—մէ-բաշ մէ բան էկաւ փքրումս, վուր մէ քսան տարի սրամէն առաջ խաղացած օղորմած հօքի Չուբալօվի թրիատրումը «Ռուզան» պիէսի բոփակը Չաքարէի... այ էս վուր բայրաղը ձեռին բիմն է տուճն նընգում... (Նրա գլխի ճօթուիլը գիղենայ միթամ շատ բան շինեց այ) ու «Էլզայի» օջախի հաւաղարիմ գուլլուխի «Տիմօշի» ինձ հա-մա դուս գրած գէրբըր տանն է, ձեռաց վի-կալայ էտուճք ու վաղտի պարուն նընգիր-ներուս մուգ, ու ասի, էստուճք ձիգ մուգ գրաւ կէնայ ու խնթրում իմ ձիգ ասի, ինձ մէ տանն աբասի փուգ տաք վուր կանէնամ էս մինձ պրագնիկին ասի կարմիր ձու մա-յինց ներկիմ: Ձէր անգաճը բաղմնու արին, ու իժում տէհան վուր շատ իմ զահլայ տա-նում... վո՞ւ... վուշ ցէի զահլա տարի չա-չանակ խօ չէի ու ան թէ թիատրի խաղող խօմ չէի, վուր իս բղաւիլ ճղաւիլ էի, ու խալիս սուտ ու փուս թամաշա էր արի. ու իրենց սովեմեմէն հիղը ասին, վուր չունքի էս թաւուր մինձ պրագնիկ է ու Գրիստու-սի Յարութիւնն է ասին, ու վաղուցայ ճա-



1910 թ. 16 հունիսի 16

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ՄԱՐԲԱԿ

Կոմպլեկտներ

ՇՔԵՂ ԿԱԶՄՈՎ

1906 թ. 5 ռ.

1907 թ. 7 ռ.

1908 թ. 7 ռ.

1909 թ. 7 ռ.

1910 թ. 7 ռ.

Հին համարները հատով թիֆլիսում

10 կոպ., թիֆլիսից դուրս 12 .:

Դիմել՝ «Սաթարալա»-ի գրասենյակին:

նանչը, էդ դերերու տէտրակները միզ մօդ մնայ, կուլի էլի պէտքը գայ, ու քիզ հինգ արասի կուտանք ու հաջաթ չէ մի քիչ դայրաթով եօլա գնայ ասին... էլ ինչ պիտի ասիլ էի շնորհակալ իմ ասի ու գլուխս կախ արած գնացի իմ թաղարիքը տէհնելու... մտա գէմուղէմը բաղլի դուքան, լօբի, սուխ, կարտօփիլ, մակարոն, ու մէ քիչ էլ ձիթ առայ, դուրթ է էս թահրի օրէրին էն էլ վիբշի շաքաթ օրը խիղճ բաղալն էլ արմցաւ իմ առուտուրի վրայ հիմա ինչ նրա բանն էր իրն առուտուրն է, իմն էլ փուղ տալը, վա... կուլի ուսեղէնը ինձ գարար է ու պասեղէնը օրուտ, հալբաթ փրանցուզ գիղէցաւ ու էլ ձէն չհանեց, վիկալայ ու դէմուղէմը գնացի տուն, էն մախլաս էլ ինչ գլուխներդ ցանեցնիմ ու էտէնցութենով թաղայ մինձ պոս սկսեցի... Հն մոռացայ ձեզ ասիմ վուր մէ ջուխտ ձեր փուղ կի մայինց թողի վուր կարմիր ներկիմ ու էնդով մայինց կանէնամ իմ աղիզ ու անմոռանալի իմ իղլի սիրտը կտորած ննդիւններուն շնորհավուրիմ Բրիտտոսի Յարութինը...:

Թիասրի սիրող

Այանը Բազում

—Այան, Բաքում հինչ կերալլա քեզ հալալ, հինչ տեսալլա մեզ պատմի:

—էհ, ձեզ մատաղ, վետս կտորած պտէր Բաքուն տեսած չպիտի. լնայ կրակ ընկնիլի օլքայ ա:

—Խէ այան, լոխ էլ թարիֆին տամ:

—Իմ տեսածս պատմեմ. դուք էլ թարիֆ տէք: Եկանք վակզալ. մի մեծ գալ էր, շատը կնակիք. հով կեամ էր. դաստի նրանց հոսչին եա չայ, եա խորակ, եա զափայ էին տալիս: Նրանց ձեռքը սրտեն կենայ. աչքս վրայ մնաց վեր մի դատ էլ ինձ թաւազայ անեն: Խորակների հոտը հալա քըթումս է:

—Այան, էդ հինչ վար տեսալլա չիմ փողով ա. միւհտա բան չեն տալիս:

—Խէ, այանը նաշիա է (յիմար), էնա այամը խարաբա ըլել, հինչ վոր հայասըդներ—չեապայով էին գալիս, ալիստի սուտրի բուտրի անելով ձեռաց մի լաւ բան էին թաւազայ անում էնքան նղըզվեցի, հենց օղում էի իմ գլուխս էլ փոխեմ հայասըղի գլոխ շինեմ, վար ինձ էլ հօրմաթ անեն:

Չալաքի



Ա Ռ Ե Ի Տ Ր Ե Կ Ե Ն Տ Ո Ւ Ն

„ԸՆԿ. ԳՐԱՄՈՓՈՆՆԵՐ“

Գ. Ս. ԴԱԻԻԴՈՎ և ԸՆԿ.

Առաջարկում է աշխարհում եղած լաւ գրամօֆոններ և պլաստիկներ իջեցրած գներով

ՊԼԱՍՏԻԿԱՆԵՐԻ ԳԻՆԸ

Ա.Ռ.Ս.Ջ

Ա.Յ.ԺՄ

3 ռ.

2 ռ.

Ջաֆար, Մաշաղի-Մահմեդ Բագրատա Մողժեղա Իսլամ Նիկոլա

3—3

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է

ՆԱՐ-ԴՈՍ

Պ Ա Յ Բ Ա Ր

Վ Է Պ

ԳիճԳ է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Սուրհանդակ»-ի խմբագրատանը, ուր և դիմում են գումարով գնողները:



— JHVNIN —

ՀԱՅ ԳՈՐԾՁԻ ԱՊԱԳԱՆ